

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Օրինագիծն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի
կողմից «21» հունիսի 1993 թ. Հ.Ն-0853-Ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՆՈՏԱՐԻԱՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԴԱՍԱՅԻՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության, արդարադատության նախարարության,
դատարանների, պետական նոտարիատի աշխատողների համար սահմանվում են հետևյալ
դասային կոչումները.

արդարադատության պետական խորհրդական
արդարադատության առաջին դասի պետական խորհրդական
արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական
արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական
արդարադատության առաջին դասի խորհրդական
արդարադատության երկրորդ դասի խորհրդական
արդարադատության երրորդ դասի խորհրդական
առաջին դասի իրավաբան
երկրորդ դասի իրավաբան
երրորդ դասի իրավաբան:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Լ. Տեր-Պետրոսյան

08 հունիսի 1993 թվականի,
քաղ. Երևան
ՀՕ-60